

**ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ «ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇԱՐՔԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ
Խաչիկյան Գ. Վ.**

Հոդվածում Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» բանաստեղծությունների շարքը վերլուծվել է նրա կառուցվածքի մեջ «Թողի երկիրն իմ հայրենի» տողով սկսվող բանաստեղծության ներառմամբ՝ այն դիտարկելով շարքի առաջին բանաստեղծություն: Նման ընթերցման ու մեկնաբանման դեպքում շարքը դյուրին կընկալվի նաև հանրակրթական դպրոցի հումանիտար հոսքի աշակերտների կողմից: Մեր այսպիսի մոտեցումը ներկայացրել ենք շարքի թե՛ գրականագիտական վերլուծությամբ և թե՛ աշակերտներին ԽԻԿ համակարգով մատուցելու համար: Հետևաբար ուսուցողական նպատակներ հետապնդող այս հոդվածը հատկապես հանձնարարելի ենք համարում ուսուցիչներին, ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանի ծրագրով նախատեսված «Վահան Տերյան» թեմայի շրջանակում «Երկիր Նաիրի» շարքը ուսումնասիրող աշակերտներին, բուհերի դիմորդներին և ուսանողներին:

Բանալի բառեր. Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը, բանաստեղծական շարք, արքեսիպեր, քրիստոնեական խորհրդանշաններ, ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանի ծրագիր, ԽԻԿ համակարգ, ուսուցիչ, դիմորդ, ուսանող:

Հոդվածի թեմայի **արդիականությունը** պայմանավորված է կրթության ու գիտության ժամանակակից հիմնախնդիրների հետ ունեցած որոշակի առնչությունների շնորհիվ: Այս առումով մենք կարևորում ենք հայ քնարերգության բացառիկ նվաճումներից մեկը հանդիսացող Տերյանի քնարերգության ուսուցման որոշ, մեր կարծիքով, ուշագրավ խնդիրների արծարծումները իրականացնել՝ արդի գրականության տեսության և, մասնավորապես, ժամանակակից

տերյանագիտության մեջ նորագույն հետազոտությունները / [4], [7] և այլն/ հաշվի առնելով:

Մեր **նպատակն** է ներկայացնել «Երկիր Նաիրի» շարքի ուսումնասիրման և ուսուցման հետ կապված գիտական և մեթոդական մի քանի մոտեցումներ և հատկապես բանաստեղծական շարքի մասին ժամանակակից տեսական պատկերացումները: Դրանք կիրառել ենք հայ գրականագիտության մեջ այս թեմայի վերաբերյալ եղած ձեռքբերումների հետ համադրության մեջ՝ առաջարկելով նաև մեր կողմից «Երկիր Նաիրի» շարքի կառուցվածքը և բովանդակությունը ուսումնասիրելու և հանրակրթական դպրոցում այն ուսուցանելու նոր վարկած:

«Երկիր Նաիրի» շարքի ուսումնասիրման և ուսուցման հետ կապված մի քանի գիտամեթոդական մոտեցումների անդրադառնալիս, անշուշտ, անհրաժեշտ է մի անգամ ևս հավաստիացնել, որ հայ մեծանուն քնարերգուի ստեղծագործական մեթոդը հիմնականում սիմվոլիզմն էր իր յուրահատուկ հայկական տարբերակի մեջ: Ինչպես բնորոշ է մեծ բանաստեղծներին, նա գրական այս մեթոդի գաղափարագեղարվեստական սկզբունքներին մոտենում էր ստեղծագործաբար՝ իր կապերը սերտորեն պահպանելով հայ և համաշխարհային կյանքի էլևէջումների ու կենսազգացողության իր սուբյեկտիվ ընկալումների կենդանի տրոփյունի հետ: Նախ՝ խոսենք շարքի կառուցվածքի մասին: Հայտնի է, որ «Երկիր Նաիրի» շարքը Վ. Տերյանը չի ամբողջացրել իր կենդանության օրոք: Նրա կամքով միայն 14 բանաստեղծություն է առանձնացվել, որոնք դարձել են շարքը կազմող հիմնական բաղադրիչ բանաստեղծությունները: Սակայն հետագայում ուսումնասիրելով Տերյանի բանաստեղծական շարքերի կառուցվածքների հետ կապված գրականագիտական խնդիրը՝ ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը, թեմատիկ, գաղափարական, զգացմունքային, ոճական ընդհանրություններ տեսնելով այս շարքի և մի քանի այլ բանաստեղծությունների միջև, իր կազմած և խմբագրած Վ. Տերյանի «Բանաստեղծություններ. լիակատար ժողովածուի» մեջ «Երկիր Նաիրի» շարքը ներկայացրել է 18 բանաստեղծությամբ [9,279-298]: Անկախության տարիներին միջին և ավագ դպրոցի «Գրականություն» և «Հայ գրականություն» հումանիտար հոսքի 11-րդ դասարանի համար գրված դասագրքերի հեղինակները նկատի են ունեցել շարքի մեջ ընդգրկված բանաստեղծությունների քանակի երկու տարբերակներն էլ: Զ. Ավետիսյանի և Վ. Կիրակոսյանի՝ 8-րդ դասարանի համար ստեղծված

«Գրականություն» դասագրքում Վ. Տերյանին նվիրված թեմայի շրջանակում «Երկիր Նաիրի» շարքը աշակերտներին մատուցված է 14 բանաստեղծության տարբերակով [1]:

Հայ մեծանուն բանաստեղծի մասին թեման առավել հանգամանորեն ուսումնասիրվում է ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանում [2,133-160]: Դասագրքի հեղինակ Դ. Գասպարյանն այստեղ «Երկիր Նաիրի» շարքը գրականագիտական վերլուծությամբ աշակերտներին մատուցում է՝ ջրբաշանական տարբերակը նկատի ունենալով: Առաջարկված տարբերակը ակադեմիկոսը հիմնավորել է իր աշխատություններից մեկում [6, 262-269], որտեղ կատարված մեկնաբանությունները մեզ համար ևս ընդունելի են: Բանաստեղծական շարքերի՝ ժամանակակից տեսության մեջ ևս հետազոտող-գրականագետի կողմից գրողի ստեղծագործությունների շարքեր ստեղծելու սկզբունքը կարևորվում է և հետազոտվում [12,174-180]: Եվ ահա գրականագետն իր հիշյալ աշխատության մեջ շարքում նպատակահարմար է համարել ավելացնել հինգ բանաստեղծություն, այդ թվում՝ «Թողի երկիրն իմ հայրենի» տողով սկսվողը. «Չէ՞ որ այստեղ հնչում է «հոգևոր վերադարձի» նույն այն մոտիվը, ինչը մենք տեսանք «Որպես Լաերտի որդին, որպես...» բանաստեղծության մեջ» [6, 268], - գրել է նա: Մակայն նշանավոր գրականագետը մեծ բանաստեղծի իր կազմած և խմբագրած ժողովածուում զարմանալիորեն «Երկիր Նաիրի» շարքի մեջ այն չի տեղադրել: Տերյանագետ Վ. Պարտիզունին «Թողի երկիրն իմ հայրենի» բանաստեղծությունն այս շարքի մեջ ներառելու կապակցությամբ նշել է. «/չենք երաշխավորում, որ չի կարող վերարծարծվել այդ մասին եղած տարակարծությունը/» [5,221]: Ուշագրավ է, որ դեռևս 1966թ. գրականագետ Խ. Մարգարյանը այս երկի մասին գրել էր. «Կարծես քանդակագարդ մի մուտք լինի, որ տանում է «Երկիր Նաիրի» հոյակապ շարքը» [7,143]: Նկատենք նաև, որ այս բանաստեղծությունը հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի «Մայրենի» վերնագրված դասագիրքը կազմողները զետեղել են գրքում՝ աշակերտներին ուղղված հետևյալ գրությամբ. «Դու ավարտում ես մայրենիի այս տարվա դասընթացը: Կարդա՛ այս բանաստեղծությունը: Իմացի՛ր, որ աշխարհում ամենից թանկը հայրենիքն է» [3, 231]: Այսինքն՝ այս բանաստեղծությունը աշակերտի ուշադրությանն է ներկայացվում դպրոցում՝ արդեն այս շրջանում:

Հաշվի առնելով Տերյանի «Երկիր Նաիրի» շարքի ուսումնասիրման ուղղությամբ ձեռք բերվածը մեր գրականագիտության մեջ և կարևորելով

բանաստեղծական շարքի ժամանակակից տեսության ուսումնասիրողների /Ի. Վ. Ֆոմենկո, Մ. Ն. Դարվին, Լ. Ե. Լյապինա և ուրիշներ/ կարծիքները՝ ուզում ենք ներկայացնել շարքի կառուցվածքի և մեկնաբանության մեր վարկածը, որը, կարծում ենք, նպաստելու է նաև հանրակրթական դպրոցում այն իր գաղափարագեղարվեստական ամբողջության մեջ նպատակասլաց կերպով ուսուցանելու գործընթացին: Մեր համոզմամբ «Երկիր Նաիրի» շարքի մեջ, պահպանելով Մ. Լերմոնտովի հայտնի բնաբանը /Люблю отчизну я, но странная любовь/, անպայման հարկավոր է ներմուծել «Թողի երկիրն իմ հայրենի» բանաստեղծությունը, որը կարող է նույնիսկ շարքի առաջին բանաստեղծության կարգավիճակն ունենալ: Այսպիսի վարկածը հիմնավորում ենք հետևյալ տրամաբանությամբ: Տերյանը, շարքի իբրև առաջին բանաստեղծություն, արդեն նախապես նկատի էր ունեցել «Մի՞թե վերջին պոետն եմ ես» քերթվածը, սակայն հետո շարքի առաջին բանաստեղծություն է դարձրել «Որպես Լաերտի որդին, որպես...» բանաստեղծությունը: Նշեցինք, որ իր կենդանության օրոք այս շարքը նա, այնուամենայնիվ, չի ամբողջացրել, ուստի գրականագետներն այն համարելու, հարստացնելու պահանջ են զգացել, ինչը ժամանակակից տեսաբանների կողմից, ընդհանուր առմամբ, ևս ընդունելի է համարվում:

«Թողի երկիրն իմ հայրենի» բանաստեղծությունն առաջին բանաստեղծություն ենք ուզում տեսնել՝ առայժմ նկատի ունենալով բանաստեղծական այս շարքն իբրև գեղարվեստական յուրահատուկ ժանրային ամբողջություն հանդիսացող երկ: Այս բանաստեղծության նման դիրքը նաև շարքի բովանդակությունը աշակերտներին ուսուցանելու տեսանկյունից կարող է նպատակահարմար լինել: Մենք նկատի ունենք բանաստեղծական շարքի հետևյալ առանձնահատկությունները ևս, մասնավորապես՝ շարքի մեջ մտնող բանաստեղծությունների թեմատիկ մերձավորությունը, «յուրահատուկ *սյուժեն*, որի տակ հասկացվում է շարքի ներքին դինամիկան, երբ շարքի սահմաններում տեղի է ունենում թեմայի զարգացում» [11]: Եվ ահա բանաստեղծը, լերմոնտովյան «Հայրենիք» բանաստեղծության առաջին տողը դարձնելով բնաբան, ցանկացել է շարքում բացահայտել հայրենիքի՝ Երկիր Նաիրիի հանդեպ իր անսովոր մեծ սիրո բանաստեղծական դրսևորումները: Հայրենիքի նկատմամբ իր սիրո արտասովորությունը գեղարվեստորեն տեսանելի դարձնելու համար շարքի մեջ օգտագործել է իր համար հայրենիքի նշանակությունը

արժևորող չափման յուրահատուկ արժեքային համակարգեր, արքետիպային պատկերացումներ, այդ թվում նաև **հարազատ և օտար լինելու** դիտանկյուններից: Ուստի «Թողի երկիրն իմ հայրենի...» բանաստեղծությամբ սկսելու դեպքում արդեն ընթերցողին /նաև աշակերտին/ իր աշխարհաճանաչողության չափով ու երևակայության շրջանակում ներկայացնում է իր համար հայրենիքի ունեցած բացառիկ նշանակությունը՝ իբրև տենչալի «գերիչ երագ», իբրև «անուշ անուն»: Հայրենիքը պոետ-քնարական հերոսի համար ունեցած այդպիսի բացառիկ հոգեհարազատության տիրույթում համեմատվում է աշխարհի տարբեր ծայրերում «հանդիպած» հեքիաթային-ֆանտաստիկ երևույթների ու գայթակղիչ գեղեցկուհիների ձգողական դաշտի հետ /«Տեսա ծառեր հրատերև, //Տեսա ակունքն արեգական, //Եվ փերիներ քնքուշ ու սև, //Սչքերը՝ բոց, իրենք՝ խավար, //Եվ փերիներ տեսա թեթև// Փրփուրի պես՝ ճերմակ ու վառ»: Եվ այդ ամենի համեմատ՝ նախապատվությունը տրվում է, անշուշտ, հայրենիքին. «Բոլորը՝ ծուխ, բոլորն՝ ավազ, //Բոլորն՝ ավար ջուր ու քամուն. //Չըկա՝ քեզնից գերիչ երագ, //Քո անունից անո՛ւշ անուն»: Իր համար բարձրագույն արժեք համարելով հայրենիքը՝ պոետը «Որպես Ուլիս մի, որպես» բանաստեղծությամբ արդեն ներկայացնում է իր հոգևոր վերադարձը դեպի հարազատ երկիր, որին հաջորդում են մյուս հայտնի երկերը: Տերյանի «Երկիր Նաիրի» շարքի մեր առաջարկած կառուցվածքով վերլուծությունը հանձնարարելի է հանրակրթական դպրոցի 8-րդ և հատկապես 11-րդ դասարաններում հայոց լեզու և գրականություն դասավանդող ուսուցիչներին, նույն դասարանների աշակերտներին: Մասնավորապես ուսուցիչների համար հանձնարարելի ենք համարում «Վահան Տերյան» թեմայի շրջանակում «Երկիր Նաիրի» շարքը ուսուցանելիս օգտագործել և՛ ավանդական, և՛ ժամանակակից ուսուցման մեթոդները: Այս տեսանկյունից առաջարկվող շարքը կարելի է ուսումնասիրել՝ օգտագործելով, օրինակ, դաս-դասախոսություն, բանավեճ, ԽԻԿ համակարգ մեթոդները և այլ հնարներ ուսուցչի ընտրությամբ: Քանի որ ԽԻԿ համակարգը ժամանակակից ուսուցման գործընթացներում լայնորեն կիրառվում է, ուստի ուսուցչին օգնելու նպատակով ուզում ենք ներկայացնել 11-րդ դասարանում Վ. Տերյանի բանաստեղծական շարքերը» թեմայի շրջանակում «Երկիր Նաիրի» շարքի ուսուցման մի այսպիսի տարբերակ:

Խթանման փուլում օգտագործելով մտազրոհ մեթոդը՝ աշակերտներին հարցեր ուղղել բանաստեղծական շարքի մասին նրանց

գիտելիքները բացահայտելու նպատակով: Տարբեր աշակերտների պատասխաններից պարզվելու է բանաստեղծական շարքի մասին որոշակի պատկերացում, որը նրանք ձեռք էին բերել դեռևս 8-րդ դասարանում: Ուսուցչի օգնությամբ կամրագրվի, որ բանաստեղծական շարքը բանաստեղծի կողմից կազմված բանաստեղծությունների ամբողջությունն է, որտեղ համախմբված են ընդհանուր թեմա, գաղափարներ, տրամադրություններ արտահայտող բանաստեղծություններ: Շարքը կարող է ունենալ նաև ներքին պլոտե, որն արտահայտվում է թեմաների, գաղափարների տրամադրությունների նկատելի զարգացման դեպքում: Ընդգծվում է, որ շարքի մեջ մտնող բանաստեղծությունները և՛ իրենց որոշակի տեղն ունեն այդտեղ, և՛ կարող են կիրառվել իբրև ինքնուրույն ստեղծագործություն: Բանաստեղծական շարքը որոշ ընդհանրություն ունի քնարական պոեմի հետ, թեև որոշակիորեն նաև տարբերվում է նրանից: Պետք է ընդգծվի, որ նոր դասի թեման և նպատակն է ուսումնասիրել հայ նշանավոր բանաստեղծ Վ.Տերյանի բանաստեղծական շարքերը, այդ թվում՝ նաև «Երկիր Նաիրին», որն ունի շարքի մասին աշակերտների հիշատակած հատկանիշները:

Իմաստի ընկալման փուլում ուսուցչի օգնությամբ աշակերտները կողմնորոշվում են, որ «Երկիր Նաիրի» շարքը կարելի է մեկնաբանել նկատի ունենալով ներքին պլոտեն կամ թեմաների գաղափարների, տրամադրությունների ներքին զարգացման տեսանկյունը: Ըստ այդմ՝ մեր կողմից կատարված առաջարկի շնորհիվ շարքի մեջ ներառված «Թողի երկիրն իմ հայրենի» բանաստեղծությունը ուսուցիչը ներկայացնում է իբրև հեղինակի վերհուշի միջոցով հայրենիքից հեռանալու, աշխարհում շրջելու և, ի վերջո, կյանքում ամենամեծ արժեքն իր հայրենիքը համարելու գաղափարը: Հաջորդ քերթվածով /«Որպես Լաերտի որդին, որպես»/ պոետն արտահայտում է մտովի հայրենիք վերադառնալու իր բուռն ցանկությունը: Աշակերտները, իմանալով, որ շարքի բանաստեղծությունները գրված են 1913-1917 թթ., նրանցում ներկայացված հայրենիքի ծանր, անելանելի, մռայլ կացությունը, ողբերգական վիճակը, ուսուցչի օգնությամբ բացատրում են նախ և առաջ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում երիտթուրքերի կողմից իրականացված արևմտահայության ցեղասպանության հանգամանքով: Այդպիսի իրավիճակում Տերյանը շարքում արտահայտված քնարական պատկերներով ու տրամադրություններով ցանկանում է լինել վտանգի մեջ գտնվող իր

հայրենիքի, ժողովրդի՝ Երկիր Նաիրիի կողքին՝ նրան սփոփելու և գոտեպնդելու համար: Այդպես նա հաստատում էր իր անսովոր, անծայրածիր սերն ու նվիրվածությունը հայրենիքին, որ հասնում է մինչև նրա հետ նույնանալու գաղափարին: Շարքի տիրույթում Տերյանը ստեղծել է թե՛ Երկիր Նաիրիի՝ որպես «հոգևոր Հայաստանի» քնարական-գրական կերպարը, թե՛ իր՝ որպես հայրենիքի ճակատագրով մտահոգ բանաստեղծի կերպարը: Աշակերտներն այս միտքը կարող են հաստատել «Մի թե վերջին պոետն էս ես//Վերջին երգիչն իմ երկրի» բանաստեղծության ընթերցմամբ կամ արտասանությամբ:

Այս փուլում ուսուցիչը կարող է կիրառել «Համառոտ դասախոսություն» մեթոդը՝ աշակերտներին ծանոթացնելու «արքետիպ» եզրույթին՝ օգտվելով դպրոցականների համար ստեղծված ռուս գիտնական-մեթոդիստի բառարանից: «Արքետիպ /առաջացել է հունարեն արխե-սկիզբ և տիպոս-կերպար/ -սկզբնական կերպար. «հավաքական անգիտակցականի կերպարներ» /Կ. Յունգ/, այսինքն՝ հնագույն համամարդկային խորհրդանշաններ, որոնք ընկած են միջերի, բանահյուսության և հենց մշակույթի մեջ ամբողջությամբ» [8,140]: Եզրույթի մեկնաբանությունը աշակերտները կարող են գրել իրենց գրականության տետրերում: Ուսուցիչը պետք է բացատրի, որ արքետիպերի դիտանկյունից մեկնաբանություններ կատարելիս մենք ավելի ենք ընդգծում Տերյանի գեղարվեստական մտածողության առնչությունները ազգային կյանքի և համամարդկային ու կենսահոգեբանական բնույթի խորքային երևույթներին, համաշխարհային ու էթնոմշակութային գրական կերպարներին: Արքետիպերի կամ նախասկզբնական գրական կերպարների դրսևորումներ են Ուլիս/Ոդիսևսի, Արա Գեղեցիկի, Նվարդի, Շամիրամի, ինչպես նաև քրիստոնեական խաչված Քրիստոսի, Մարիամ Աստվածածնի խորհրդանշական կերպարները, արքետիպային սիմվոլներ են «Տուն», «Անտուն», «Արև», «Լույս», «Հուր» բառ-հասկացությունները և այլն: Գեղարվեստական այս ողջ համակարգի միջոցով ընդգծվում են հայրենիքի հանդեպ պոետի արտասովոր մեծ սիրո առանձնահատկությունները, որոնք ավելի որոշակի կարելի է ներկայացնել հաջորդ փուլում:

Կշռադատման փուլում աշակերտները պետք է կարողանան բացատրել, որ բանաստեղծի մեծ սերը հայրենիքի հանդեպ պայմանավորված է մի շարք գործոններով: Տերյանն իր հայրենիքը սիրում է առանց սնապարծության մեջ ընկնելու: Նա սիրում է այնպես,

ինչպես որդին է սիրում իր մեծագույն կորուստներ կրած, տառապած մորը, ուստի պոետն իր ավերված երկիրը համեմատում է Մարիամ Աստվածածնի հետ, ինչն ավելի լայն ընդհանրացում պարունակող պատկեր է դառնում: Աշակերտները ընթերցում են կամ արտասանում հետևյալ բանաստեղծությունը. «Ինչպե՞ս չըսիրեմ, երկիր իմ կիզված //Պարզված վերըստին սրերին սուրսայր.// «Ինչպե՞ս չըսիրեմ, - հեգությամբ լցված //Դու յոթնապատի՛կ խոցված Տիրամայր»:

Աշակերտներին հասկանալի է դառնում, որ բանաստեղծի սերը Երկիր Նաիրիի՝ իր հայրենիքի հանդեպ պայմանավորված է մեր ժողովրդի քաղաքակրթական ձեռքբերումներով ու բարոյական նկարագրով, որը դրսևորվել է դեռևս հայկական առասպելներում /օրինակ՝ «Արա Գեղեցիկ և Շամիրամ»-ում/ արտահայտված հայրենիքին չդավաճանելու, ազգային լեզվին ու մշակույթին հավատարիմ մնալու գաղափարների շնորհիվ: Այս միտքը հաստատվում է «Չեմ դավաճանի իմ Նվարդին» տողով սկսվող տրիոլետի արտասանությամբ: Աշակերտներին անհրաժեշտ է տեղեկացնել, որ Տերյանն իրական կյանքում ևս հավատարիմ է մնացել ազգային արժեքներին, հայերեն ստեղծագործելու սկզբունքին, և երբ նրան ռուս գրող Մ. Գորկին առաջարկել է հայերեն գրելու փոխարեն ստեղծագործել ռուսերեն, Տերյանը չի համաձայնվել և ի պատասխան նման առաջարկի՝ գրել է վերոհիշյալ տրիոլետը:

Ի վերջո հայրենիքի հանդեպ բացառիկ սիրո, անմնացորդ նվիրումի մասին է վկայում Վ. Տերյանի՝ հազարամյակների խորքից քաղաքակրթության ճանապարհներով անցած, սակայն նոր ժամանակներում /հատկապես Առաջին աշխարհամարտի ժամանակ/ ավերակների վերածված իր հայրենիքի, ժողովրդի արժանապատվությունը յուրովի բարձր պահելու պատվախնդրությունը: Այդ միտքը հանճարեղ կերպով է արտահայտվել շարքի վերջին «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին» տողով սկսվող բանաստեղծության մեջ: Վերջինս ամփոփ կերպով է ներկայացնում մի կողմից՝ «Երկիր Նաիրի» շարքի բովանդակությունը, մյուս կողմից՝ նրա շահերի արտահայտիչ ու արժանապատվության պաշտպան հայ բանաստեղծ Վահան Տերյանի հայրենասիրության ու հայրենիքի վերածննդի ու հարության նկատմամբ ամրակուռ հավատը: Աշակերտներին հասանելի պետք է դարձնել, որ առաջին տողում արտահայտած մտքով պոետը ոչ միայն մեղադրում է հատկապես ցարական Ռուսաստանի վերնախավի, հետո նաև խորհրդային վերնախավի շրջանում իր ժողովրդին ըստ արժանվույն չգնահատողներին /արջը ռուսներին խորհրդանշող կենդանի է [10]/, այլև

ընդհանրապես բարբարոս, լիարժեք չքաղաքակրթված ազգերին, մեր հանդեպ արհամարհական վերաբերմունք դրսևորողներին: Ըստ այդմ էլ աշակերտները կարող են հաստատել՝ այս քերթվածից մեջբերում կատարելով, որ մեր ժողովուրդն իր հայրենիքում հազարավոր տարիներ մշակութային հարուստ կյանքով է ապրել, եղել է հին աշխարհի պետությունների, օրինակ՝ Բաբելոնի, Ասորիքի ժամանակակիցը. վերջիններս, սակայն, վաղուց ոչնչացել են, անհետացել պատմության թատերաբեմից, իսկ հայ ժողովուրդը շարունակում է գոյատևել և մշակութաստեղծ գործունեությամբ զբաղվել: Այդ իսկ պատճառով պոետը հավատում է մեր ժողովրդի հարատևությանը: Երրորդ փուլն ավարտվում է մի անգամ ևս ամբողջ երկն ընթերցելով:

Այսպիսով, կարծում ենք, որ մեր դիտարկումները օգտակար կարող են լինել հանրակրթական դպրոցի 8-րդ, 11-րդ դասարաններում Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը ուսուցանող ուսուցիչներին, աշակերտներին, ինչպես նաև ավարտական դասարանում ընդունելության քննություններին նախապատրաստվողներին: Դրանք կարելի է հանձնարարել նաև մեծ բանաստեղծի ստեղծագործությունն ուսումնասիրող ուսանողներին, ինչպես նաև նրանց, ովքեր հետաքրքրվում են «Երկիր Նաիրի» շարքի կառուցվածքով և մեկնաբանությամբ:

О НЕКОТОРЫХ ПРОБЛЕМАХ ОБУЧЕНИЯ СТИХОТВОРНОМУ ЦИКЛУ ВААНА ТЕРЯНА "СТРАНА НАИРИ"

Хачикян Г. В.

В статье мы попытались провести подробный анализ стихотворного цикла В. Теряна "Страна Наيري". Но особо выделили стихотворение поэта "Оставил край я свой родимый".

На наш взгляд, именно данное творение автора более полно, всесторонне раскрывает внутренний сюжет, тему, идею творчества, при этом выражая мысли, настроение, переживания самого поэта и, что самое важное, дает возможность учащимся гуманитарных потоков старших школ в процессе обучения более наглядно усвоить изучаемый материал, воспринимая тонкости патриотизма великого поэта. Следует указать, что в статье показан не только тщательный литературоведческий анализ, но и предложена продуктивная поэтапная система обучения цикла ССО. I-этап стимулирования, II-этап восприятия смысла, III-этап обдумывания.

Указанная система, безусловно, преследует обучающие и познавательные цели, она во многом эффективна и может быть успешно использована в процессе обучения не только преподавателями старших школ, но и быть полезным справочным материалом для абитуриентов и студентов.

Ключевые слова: цикл "Страна Наири" В. Теряна, лирический цикл, архетип, христианские символы, старшая школа гуманитарный поток, 11 класс программа, система ССО, учитель, абитуриент, студент.

**ABOUT SEVERAL PROBLEMS OF TEACHING VAHAN TERYAN'S
"YERKIR NAIRI" POETIC SERIES
Khachikyan G. V.**

In this article, we tried to conduct a detailed analysis of V. Teryan's poetic cycle, "Yerkir Nairi". But the poem "Toghi Yerkirn im Hayreni " ("I left my Homeland") was especially highlighted here. To our mind, especially the author's this particular creation more completely, comprehensively reveals the inner plot, theme, idea of creativity while expressing the thoughts, mood, experiences of the poet himself and, most importantly, allows students of the humanitarian streams of high schools in the learning process, to more clearly assimilate the learning material, perceiving the subtleties of the patriotism of the great poet.

It should be noted that the article shows not only a thorough literary analysis, but also proposes a productive step-by-step training system for the PPW cycle - I-stage of promotion, II-stage of meaning of perception, III-stage of weighing. This system, which pursues students and cognitive goals, is in many ways effective and can be successfully used in the learning process not only by teachers of high schools, but also be a useful reference material for applicants and students.

Keywords: Series of V. Teryan's "Yerkir Nairi", lyric cycle, archetype, Christian symbols, high school, humanitarian stream the 11th grade program, PPW system, teacher, applicant, student.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Զ., Կիրակոսյան Վ. Գրականություն: Դասագիրք հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի համար: Եր., «Մակմիլան-Արմենիա»: 2007: 264 էջ:

2. Գասպարյան Դ., Քալանթարյան Ժ. Հայ գրականություն, հանրակրթական դպրոցի 11-րդ դասարանի դասագիրք: Եր., «Արևիկ»: 2010: 256 էջ:
3. Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ. Մայրենի: Հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք: Եր., «Էդիթ Պրինտ»: 2007: 256 էջ:
4. Էմին-Տերյան Գ. Վահան Տերյան. անտիպ և անհայտ էջեր /համակներ, հոդվածներ, գրախոսություններ/: Եր., «Տիգրան Մեծ»: 2014: 740 էջ:
5. Պարտիզունի Վ. Տերյանի հետ: Եր., «Հայաստան»: 1989: 328 էջ:
6. Ջրբաշյան Է. Մ. Չորս գագաթ: Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց: Գրականագիտ. ուսումնասիրութ.: Եր., «Սովետ. գրող»: 1982: 468 էջ:
7. Սարգսյան Խ. Տասնամյակների միջով: Երևան, «Հայաստան» հրատ., 1966: 256 էջ:
8. Սարգսյան Մ. Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» շարքի քրիստոնեական և հեթանոսական խորհրդանիշները //Պատմաբանասիրական հանդես: Երևան, 2006: Թիվ 1: էջ 72-93:
9. Տերյան Վ. Բանաստեղծություններ, լիակատար ժողովածու: Կազմ., խմբ., առաջաբանը և ծանոթագ. գրեց Էդ. Ջրբաշյանը: Եր., «Սովետ.գրող»: 1985: 512 էջ:
10. Мещерякова М. Литература в таблицах и схемах. 3-е изд. Москва, Айрис-пресс. 2004. 140 с.
11. Касимова А. Р. Лирический цикл как идиостилевая константа//Вестник Удмуртского университета, Филологические науки. 2007. N 5/2/. С. 39-42.
12. Пепеляева Е. В. Исследовательская циклизация лирики как теоретическая проблема//Вестник Пермского университета, Вып. 2/18/. 2012. С.174-180.
13. Рябов О. В., Константинова М. А. «Русский медведь» как символический пограничник //Труды Карельского центра РАН. 2011. N 6. С. 114-123.

Տեղեկություններ հեղինակի մասին

Խաչիկյան Գ. Վ. - բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ

Շիրակի պետական համալսարան

Էլ. փոստ gagikkhachikyan@gmail.com

Տրվել է խմբագրություն՝ 20.09.2021

Գրախոսվել է՝ 15.12.2021